Մրցույթի հայտարարություն

| ՀՀ Արագածոտն իմարզի Նիգավանի , Լուսագյուղի միջնակարգ և Սարալանջի հիմնական դպրոցների կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ ՀՀ Արագածոտնի մարզի <<Սարալանջի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,

2. «Հանրակրթության մասին » օրենքի 12-րդհոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),

3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),

4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,

5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ . մայիսի 11-ից մինչև մայիսի 31-ներառյալ, ամեն օր՝ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից Սարալանջի հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. հունիսի 14-ին՝ժամը 14:00**-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոցում, հասցեն՝գ. Սարալանջ1-ին փ. 32 շ:

Տեղեկությունների համար զանգահարել /094688581/ հեռախոսահամարով, էլ. հասցե՝saralanj@schools.am:.